

9(47-925)

ժ

ՌՈՒԲԻՆԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԻԼԻԿԻԱ

Բազրատունեաց Հարստութեան անկումով եւ Անիի դաւաճանական դրաւումով, իբր արդիւնք Բիւղանդիոնի կրօնական ու ազգային ատելութեան Հայոց դէմ, թէեւ Հայաստան կորսնցուց իր Թաղաւորական դահլը, բայց Հայ ժողովուրդը երբէք չկորսնցուց իր անկախութեան ոգին եւ ազատութեան ըղձանքը: Ընդհակառակը Հայոց սիրտը աւելի վառեցաւ վրէժխնդրական ոգիով եւ Հայաստանի վերջնադոյն աղէտներու դառն յիշատակը՝ միացած անցեալի փառքերու ներշնչող յիշատակներուն, մեծադոյն ոյժը եղաւ Հայ ժողովուրդի ապագայ դործունէութեան:

Հայկական քաղաքական ու ազգային նոր դործունէութեան ասպարէզն եղաւ Կիլիկիա, նոր անուանակոչութեամբ ՍԻՄՎԱՆ:

Կիլիկիա Փոքր Ասիոյ հարաւային արեւելեան անկիւնը, Միջերկրականի ծովափին վրայ ղետեղուած երկրամաս մըն է, լեռնային ու դաշտային բաժանմունքներով, որուն սահմաններն են արեւելքէն՝ Ամանոսի լեռնաշղթան, որ հիւսիսային-արեւելքէն սկսելով կը հասնի մինչեւ Աղէքսանդրեակի Ծոցը, հիւսիսէն եւ արեւմուտքէն՝ Տաւրոս լեռներու աղեղնաձեւ գոտին եւ Պամփիլիա, իսկ հարաւէն՝ Միջերկրական Ծովը, որ օղակաձեւ ափերով կը կաղմաձեւէ Տարսոնի Գոգն ու Աղէքսանդրեակի խոր ծոցը, ինչպէս նաեւ Ասորիք:

Աշխարհադրական Կիլիկիոյ այս բնական սահմանները սակայն երբէք չեն համապատասխանած Կիլիկիոյ Հայկական իշխանութեանց սահմաններուն, որովհետեւ անոնք չարունակ փոխուած են տիրող իշխաններու դէն-

A 2403 II



քի բաղդին համեմատ : Կիլիկիայի Հայկական իշխանութեան միջին տարածութիւնը համահաւասար եղած է Պելճիդայի, Հոլանտայի կամ Զուլցեբրիոյ տարածութեան :

Կիլիկիոյ գլխաւոր լեռներն են՝ Տաւրոսեան Լեռները, որ պարսկաստանէն սկսելով կը կտրեն Մեծ Հայքը, ու կ'իջնեն մինչեւ Միջերկրական Ծով, եւ Ամանոսի կամ Սեաւ Լեռինք, որոնց բարձրութիւնը Տաւրոսեան Լեռներունը կը գլէ կ'անցնի :

Կիլիկիոյ գլխաւոր գետերն են՝ Պիւռամիս (Ճիհուն), Սարոս (Սիհուն), Կիւղնոս կամ Տարսոնի Գետ եւ Կալիկադնոս կամ Սելեւկիայի Գետ :

Երկրին լեռնային մասը հարուստ էր կրաքարի, երկաթի, կապարի, արծաթի եւայլն հանքերով, իսկ դաշտային Կիլիկիան նշանաւոր էր պտղաբերութեամբ եւ զուարճալի տեսարաններով : Դարաւոր հոյակապ անտառներ, խիտ ու բարձրաբերձ ծառերով կը զարդարէին լեռներն ու անոնց ստորոտը տարածուող դաշտերը եւ բաղմապիսի վայրի ու ընտանի կենդանիներ կը վրտային հոն, մայրի, սոճի, կաղնի եւ փիկոն ծառերու ստուերներու հովանիին ներքեւ :

Ահա այսպիսի չքեղ ու բաղմապիսի բուսականութեամբ, առատ գետերով, գեղեցիկ ու զուարթ կլիմայով, աքաղաքներ ու բերրի դաշտերով, հարուստ հանքերով եւ ծովեղերեայ երկար ու գեղեցիկ ափերով օժտուած հողամասի մը վրայ էր, որ բաղում արշաւանքներէ, ահեղ պատերազմներէ, ներքին ու արտաքին դաւաճանութիւններէ յոգնած ու պարտուած Հայկական բեկորներ եկան փորձելու իրենց քաղաքական բաղդը :

Շատ բնականօրէն այսպիսի օրհնուած ու բարձաւաճ երկիր մը իր վրայ պիտի հրաւիրէր ընչաքաղց . ու յափշտակիչ ուշադրութիւնը բոլոր աշխարհակալ պետութիւններուն, որոնց ձեռքը երկար դարեր զննակի նման

խաղալիք դառնալով, վերջապէս բաժին ինկաւ Բիւզանդական Կայսրութեան, որմէ յետոյ Յոյները դարձան Կիլիկիոյ բնիկ տէրերը:

Ռազմազինական տեսակէտէ եւս բացառիկ դիրք ունէր Կիլիկիան, շնորհիւ զինք չրջապատող անմատչելի լեռներուն ու կիրճերուն: Երկրին գլխաւոր լեռներու միջովայրը կը գտնուէին հռչակաւոր Կիլիկիոյ Դրումֆ կամ Գաւն Կիլիկիոյ, ուր կային բազում բերդեր, աշտարակներ ու պահակ դռներ: Հինգ հարիւր քիլօմէթր երկարութեամբ ծովափը իր հարաւային սահմանին վերայ, Ադէքսանդրեակի՝ կամ Հայոց Մոցով խորշաւորուած, աւելի եւս անզուգական դիրք մը կուտային իր ռազմազինական բացառիկ կեցուածքին:

Անյիշատակ ժամանակներէ ի վեր Հայեր վաճառականական կապերով կապուած էին Կիլիկիոյ հետ: Յետոյ դարերու ընթացքին, Հայաստանի դանադան փոթորկալից շրջաններուն, բաղմաթիւ Հայեր անդադրում հալածանքներու երեսէն գաղթեցին դէպի Կիլիկիա ու հաստատուեցան Տաւրոսի բարձունքներուն վրայ: Անանկ որ ԺԱ. դարուն Հայերը արդէն իրենց թուական բազմութեամբ կը վրցէին Յոյներու, Ասորոց եւ Հրէից հետ: Այս նախնական Հայ գաղթականները նոյն իսկ կրցած էին հոն ստեղծել ուսման եւ գիտութեան որոշ կեդրոններ:

Բազրատունեանց Հարստութեան անկումէն վերջ, 1080 թուականին, ՌՈՒԲէՆ Ա. Թերեւս մօտաւոր ազգական մը Բազրատունի Թազաւորաց, Գազիկ Բ. ի վրէժը լուծելու համար եւ Հայ ազգը Յունական բռնակալութենէն ազատելու նպատակաւ, Տաւրոսի բարձունքին վրայ առանձնացաւ, ու հոն գտնուող ուրիշ Հայ կտրիճներու հետ միացած ապստամբեցաւ եւ կարճ ժամանակէն Յոյները վտարեց այդ շրջանէն, ու հոն հիմնեց

վողքրիկ իշխանութիւն մը, որ իր հիմնադիրին անունով
կոչուեցաւ ՌՈՒԲԻՆԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ:

Ռուբինեան իշխանութիւնը՝ որ տարիներու ընթաց-
քին մեծցաւ ու ընդարձակեցաւ, տեւեց ճիշտ 295 տարի,
1080-էն մինչեւ 1375: Չայն կարելի է բաժնել չորս շը-
ջաններու:

Ա. ԳՐԱԽՄԱՆ ՇՐՋԱՆ. — 57 տարի, 1080 - 1137:
Այս շրջանը ունեցաւ չորս իշխաններ:

Բ. ՎԵՐՍՄԻՆ ՆՈՒԱՃՄԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՄԱՆ ՇՐՋԱՆ.
Այս շրջանը տեւեց 62 տարի, 1137 - 1199, եւ ունեցաւ
չորս իշխաններ:

Գ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ. — Այս շրջանը տե-
ւեց 143 տարի, 1199 - 1342, եւ ունեցաւ եօթը թաղաւոր-
ներ:

Դ. ՎԵՐՋԻՆ՝ ՕՏԱՐ ԵՒ ԿԻՊՐԱՑԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒ
ՇՐՋԱՆ. — Այս շրջանը տեւեց 33 տարի, 1342 - 1375 եւ
ունեցաւ չորս թաղաւորներ:

Ա. ԳՐԱԽՄԱՆ ՇՐՋԱՆ

Այս առաջին շրջանի 57 տարիներու ընթացքին Ռու-
բինեաններ հետզհետէ Կիլիկիա գրաւեցին եւ շրջակայ
բոլոր բերդատէրերն ընկճելով անոնց ընդարձակ կալ-
ուածներուն տէրը դարձան: Այդ շրջանի չորս իշխաններն
են, Ռուբէն Ա., իր որդին Կոստանդին Ա. եւ երկու
թոռները Թորոս Ա. եւ Լեւոն Ա.:

ՌՈՒԲԵՆ Ա. — Ռուբինեան Հարստութեան այս քաջ-
արի ու հռատես իշխանը իմաստութեամբ վարեց իր գը-
րաւած նոր երկիրը լման 15 տարիներ: Անիկա Կիլիկիոյ
օրինաւոր իշխանապետը ճանչցուելուն պէս, իրեն գոր-
ծակից առաւ կարգ մը ուրիշ Հայ իշխաններ, որոնք իր-

մէ առաջ արդէն յաջողած էին կէս-անկախ իշխանութիւններ հաստատել: Այս իշխաններուն մէջ կը յիշուին Ապլղարիպ Արծրունի՝ Տարսոնի կուսակալը; Օշին Հեքումեան՝ Ներսէս Լամբրոնացիի հօրը մեծ հայրը, Նաթանայէլեանի՝ Ասկուռաս բերդին տէրերը, Խաչատուր գօրավար՝ Անտիոքի մեծերէն, որ Կայսեր պաշտպան եղած էր, Գռղ Վասիլ՝ Գրիգոր վկայատէր կաթողիկոսին բարեկամը, Փիլարտոս՝ Հայ իշխան մը, որուն կալուածները Խարբերդէն ու Մարաշէն մինչեւ Անտիոք եւ Եդեսիա կ'երկարէին, եւ Գաբրիէլ՝ Մալաթիոյ Իշխան, որ խաչակրութեան մէջ իր աղջիկը կնութեան տուաւ Երուսաղէմի թաղաւորին:

Ասոնք բոլորը ենթարկուեցան Ռուբէնի ու օժանդակեցին անոր մեծութեան եւ յաղթանակներուն: Ռուբէնի մահուան ժամանակ երկիրը ծաղկած վիճակ մը ունէր՝ եւ կը ձգտէր յաղթելու ամբողջ Կիլիկիոյ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. 1095 – 1099, որդին ու յաջորդն էր Ռուբէն Ա.ի: Անիկա իր մեծամեծութեամբ ժողովուրդին սիրտը գրաւեց, Յոյներու բերդերն ու քաղաքները գրաւեց, նենդութեամբ տիրեց Վահկա անառիկ ամրոցին ու տիրացաւ Տաւրոսի եւ Վերին Կապադովկիոյ ամենաբանուկ ճանապարհին: Երբ Բիւզանդիոնի Կայսրը զայրացած կը պատրաստուէր Հայկական Կիլիկիոյ վրայ քայլել, Եւրոպայէն Կիլիկիա հասաւ Առաջին Խաչակրութեան զինեալ Քափորը (1098): Խաչակիրներու առաջին բանակը անօթի եւ ուժասպառ վիճակի մատնուած ըլլալով, եղբայրական օգնութիւն եւ քրիստոնէական վրայ դռնելութիւն գտաւ Հայերէն, որոնց օգնութեամբ խաչակիրները կարող եղան գրաւել Անտիոքը: Ի փոխարէն այս օժանդակութեան խաչակիրները Մարքիզ եւ Հիւպատոս պատուանուները շնորհեցին Կոստանդինի:

Գրիգոր ԺԳ. Պապը, Հռովմէական տոմարին բարեփոխիչը, 1584-ին գրուած կոնդակով մը Հայոց հիւրա-

սիրութիւնն ու կրօնական եռանդը հետեւեալ խօսքերով անմահացուցած է.— «Բացի այն բաղձադիմի արժանիքներէն զորս Հայ ժողովուրդը ցոյց տուած է հանդէպ եկեղեցւոյ եւ Քրիստոնէական Հասարակապետութեան, արժանի անմոռաց յիշատակի եւ դերադանց դործն այն է, երբ իշխաններն ու Քրիստոնեայ բանակները կ'երթային Սուրբ Երկիրն առնելու, ո՛չ մէկ աղօլ եւ ոչ մէկ ժողովուրդ այնպէս յօժարամիտ ու զուարթադին խաչի ղինուորներուն օգնութեան չհասան, որչափ Հայերը: Անոնք Հայթաթեցին զօրք, ղէնք, ձիեր, պաշար, խորհուրդ եւ ամէն նպաստներով ձեռնտու եւ զօրավիգն եղան քաջութեամբ եւ հաւատարմութեամբ»:

Ասոնց փոխարէն սակայն Հայ ժողովուրդը ոեւէ օգուտ չունեցաւ խաչակիրներէն իր ապագայ քաղաքական յոյսերուն տեսակէտէն ու ի վերջոյ լքանուեցաւ ու կորսնցուց ամէն բան:

ԹՈՐՈՍ Ա.— Կոստանդինի մահէն յետոյ իրեն յաջորդեց իր որդին Թորոս (1100–1123): Անիկա առաջին իշխանը եղաւ, որ իր ղէնքերը հասցուց մինչեւ Միջերկրական Ծով: Անոր գլխաւոր դործերն եղան Յոյներու ձեռքէն Անարզաբա քաղաքը գրաւել, Սելճուքեաններու արշաւանքը յետս մղել եւ Կիլիսորա բերդը գրաւելով Գագիկ Բ. ի վրէժը լուծել: Իր իշխանութեան վերջին տասը տարիները ապրեցաւ խաղաղ կեանք մը, որու ընթացքին երկիրը բարեկարգեց, բանակը վերակազմեց եւ երկրին ապահովութեան համար նորանոր ձեռնարկներ ըրաւ: Եւրոպայի մէջ այնքան տարածուեցաւ անոր համբաւը, որ սկսան «Թորոսի Երկիր» կոչել Կիլիկիան:

ԼԵՒՈՆ Ա.— 1123–1137: Թորոս Ա. ի յաջորդեց իր եղբայրը Լեւոն Ա., որուն կեանքը շատ արկածալից եղաւ եւ դժբաղդ վախճան մը ունեցաւ: Անիկա Յոյներուն անհաշտ ոսոխներէն մին Հանդիսացաւ ու անոնց ձեռքէն խլեց Մամեստիա, Ատանա եւ Տարսոն քաղաք-

ները: Լեւոն Փրանկաց Ռոմեր իշխանին օգնելով Անտիոքն աղատեց թուրքերու ձեռքէն: Սակայն անոր յաջորդ Ռեմուռը, Լեւոնէն վախճալով, նենդութեամբ կոչունքի հրաւիրեց ու զայն բանտարկեց: Լեւոն դրամ, պատանդ եւ քաղաքներ ետ տալով աղատեցաւ եւ աշխատեցաւ իր վրէժը լուծել: Լեւոն իր քաջութեամբ այնքան հիացում եւ պատկառանք ազդեց որ Եւրոպայի Ասպետներ զայն «Տաւրոսի Առիւծ» կոչեցին: 1137-ին Յովհաննէս Բ. Կոմնենոս Բիւզանդական Կայսրը մեծ պատրաստութեամբ Կիլիկիա արշաւեց: Լեւոն պարտուած եւ պաշարէ զուրկ իր ընտանիքով անձնատուր եղաւ եւ շղթայակալ փոխադրուեցաւ Պոլիս իր թորոս եւ Ռուբէն որդիներուն հետ: Ռուբէն մեռաւ հոն, եւ չնայած անոր այս կսկիծին, Կայսրը հրաշեկ երկաթով նախ աչքին լոյսէն, յետոյ կեանքէն զրկեց Լեւոնը, «Տաւրոսի Առիւծը»:

Լման եօթը տարի, Կիլիկիա մնաց Յունաց դերիշխանութեան տակ ու ենթարկուեցաւ անյադ վրէժիւրնդութեան: Նոյնիսկ Հայոց եկեղեցիներն ու վանքերը կողոպտուեցան Յոյներէն:

Բ. ՎԵՐՍՏԻՆ ՆՈՒԱՃՄԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՐՋԱՆ

Կիլիկիոյ Հայկական իշխանութեան այս երկրորդ շրջանը, 1137-1199, տեւեց 62 տարի, որու ընթացքին բռնադրաւեալ Հայկական հողամասերը վերստին ձեռք բերուեցան եւ իշխանութեան հմայքը այնքան բարձրացաւ, որ հիմը դրուեցաւ Հայկական նոր թագաւորութեան մը:

ԹՈՐՈՍ Բ.— (1144-1168.) Լեւոն Ա.ի մահէն վերջ իր որդին Թորոս Բ. Կ. Պոլսէն փախչելով եկաւ Կիլիկիա եւ շուտով նուաճեց զայն: Հայ ժողովուրդը ովսանայով ընդունեց զայն իբր ազատարարը Բիւզանդական բռնատիրութենէն: Հայ իշխաններու հաճութեամբ շուտով

բարձրացաւ իր հօրը Թափուր դահը: Անիկա աւելի ճարտար ու քաջասիրտ ըլլալով քան իր նախորդները, Ռուբինեանց անունը ամբողջ Արեւելքի մէջ հռչակուեցաւ: Անոր ամենակարեւոր դործերը եղան, նախ Կարսու թեման մատնել Կիւ-Մանուէլ Կայսեր բանակները, որոնք Անդրոնիկոսի առաջնորդութեամբ զրկուած էին Կիլիկիա: Երուսաղէմի թագաւորին օգնութեան փութալով պարտութեան մատնել Հալէպի Նուրհէտտին Սուլթանը: Խաչակիրներու հետ միասին ջախջախել Իկոնիոյ Մազսուտ Ա. Սուլթանին ոյժերը: Հաշտութիւն պարտադրել իր երդուեալ հակառակորդ ռաղմիկ Րընօ-տը-Շատիլոն՝ Անտիոքի իշխանին, եւ Մանուէլ Կայսեր յաջորդական բանակները կրկին ու կրկին պարտութեան մատնելով հաշտութեան ստիպել զալն: Կայսրը զայն ճանչցաւ Կիլիկիոյ տէր եւ «Պանսեպաստոս» տիտղոսը տուաւ անոր:

Թորոսի եղբայրը Ստեփանէ հայ դուռներու գլուխն անցած անվերջ կը հալածէր Յոյները, նպատակ ունենալով Սեւ Լեւրան կողմերը առանձին իշխանութիւն մը հաստատել: Անդրոնիկոս Յոյն զօրավարը օր մը դաւով խնճոյքի հրաւիրեց ու զայն խաշեց կաթսայի մէջ եռացած ջուրով: Թորոս իր եղբօր վրէժը լուծելու համար հրամայեց բոլոր Յոյները սրէ անցնել, սակայն Երուսաղէմի թագաւորը միջնորդութեան փութաց: Թորոս Բ. յուսահատած հրաժարեցաւ, իրեն յաջորդ նշանակելով իր անչահաս որդին Ռոմեֆէն Բ. իր աներոջ Թովմաս Պայլի խնամապաշտութեան ներքեւ:

ՄԼԵՀ Ա. — (1168-1174), Թորոս Բ.ի եղբայրը ՄԼԵՀ՝ մահմետական զօրքերով Կիլիկիա մտաւ, աւերեց զայն, իր հակառակորդները բանտարկեց, եկեղեցականները տանջեց եւ բռնադատեց որ զինքը ճանչնան Կիլիկիոյ օրինաւոր տէրը: Բռնութեամբ իշխանական աթոռը բարձրանալով անիկա ունեցաւ սարսափներով ու ոճիրներով

լի կեանք մը: Ռուբէն իշխանիկը զրկուեցաւ Հոռովակլայ Ներսէս Շնորհալի Կաթողիկոսին մօտ, ուր դադտնաբար սպաննուեցաւ Մլեհի արքանեակներու ձեռամբ: Մլեհ այնպիսի սարսափ տարածեց որ զայն կոչեցին «Աշխարհի չարագոյն մարդը»: Իր պալատականներն անգամ դառնացած իր բռնութենէն սպաննեցին զինքը Սիս քաղաքին մէջ:

ՌՈՒԲԷՆ Գ.— (1174—1185). Հրախարչ Ստեփանէի անդրանիկ որդին Ռուբէն Գ. հայ աւագանիին միաձայնութեամբ բարձրացաւ Կիլիկիոյ իշխանութեան գլուխը: Անիկա իր խոհական ու խաղաղասէր բնաւորութեամբ հանդստացուց երկիրը, ու եղաւ առաջին ու վերջին իշխանը, որու օրով ոեւէ թշնամի ոտք չդրաւ Կիլիկիոյ հողին վրայ: Անտիօքի Պեմունդ իշխանը նենգութեամբ զայն իր քով հրաւիրեց ու բանտարկեց զայն: Ռուբէնի եղբայրը Լեւոն ազատեց զայն, ու Ռուբէնի հրաժարելէն վերջ բարձրացաւ անոր գահը:

ԼԵՒՈՆ Բ.— (1185—1199). Լեւոն Բ. կառավարութեան զեկը իր ձեռքն առնելով քաջութեամբ եւ իմաստութեամբ կառավարեց զայն, երկիրը բարեկարգեց ու արժանացաւ Մեծագործ տիտղոսին: Տասը տարին հազիւ բոլորած անիկա Կիլիկիոյ թագաւոր հռչակուեցաւ, ու եղաւ Ռուբինեան Հարստութեան առաջին թագաւորը:

Գ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Թագաւորութեան շրջանը տեւեց 143 տարի, 1199—1342, որու ընթացքին Կիլիկիա բոլորովին ձերբադատուեցաւ Բիւզանդական կայսրերու իրաւասութենէն:

ԼԵՒՈՆ Բ.— (1199—1219). Կիլիկիոյ Տան առաջին թագաւոր Լեւոն Բ. իր մօր Ռիթա Բամբիչին ձեռքին տակ խնամով դաստիարակուած հայ մըն էր, «այր իմաստուն ու հանճարեղ, հմուտ ձիավար, զինուոր քաջասիրտ, ամէն գործոց մէջ արիագոյն, արագ ու զուարթագէմ»: Անոր ամենամեծ բաղձանքն էր օր մը իր իշ-

խանութեան տակ առնել նաեւ Մեծ Հայաստան ու ի վերջոյ կաղմել ընդարձակ Հայկական պետութիւն մը, Աղէքսանդրեակի Մոցէն մինչեւ Կասպից Մով: Այդ մեծ նպատակը իրագործելու համար անիկա յաճախ ունէ միջոցի առջեւ կանգ չառաւ ու հետեւեցաւ Մաքիավէլեան քաղաքականութեան մը: Պատմաբաններ զայն նկատած են Միջին դարերու հայկական ամենահզօր դէմքը եւ Մեծն Տիգրանէն վերջ, Հայ պատմութեան ամենէն մեծ աշխարհակալը:

Անիկա նախ յարեցաւ Բիւղանդասէր քաղաքականութեան, յետոյ սակայն խաչակիրներէն մեծ օգուտներ ակնկալելով ինքզինքը կապեց Գերմանիոյ կայսեր Փրէտերիկոս Ա.ի, որ այդ ժամանակ Հռովմայեցոց ինքնակալն էր: Միեւնոյն ատեն ինքզինքը որդեգիր հրատարակեց Հռովմի Քահանայապետին, զոգուած ըլլալով Բիւղանդական կղերին գոռոզ պահանջներէն եւ վերջ դնելով հայ ժողովուրդի կրօնական կղղիացումին:

Լեւոն վերակաղմեց նաեւ իր բանակները, հետեւելով իր նախնեաց նշանաբանին՝ «Սահման քաջաց դէնն՝ իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի»: Անոր ղինուորական առաջին սխրագործութիւնն եղաւ Թուրքմէններու Ռուստէն Սուլթանի պարտութիւնն ու սպանութիւնը:

Այս միջոցին Առաջաւոր Ասիոյ երկիրները կը տանջուէին Եգիպտոսի Սալահտտին Սուլթանի ձեռքին տակ: Երուսաղէմ նորէն ինկաւ անոր ուժերուն առջեւ եւ Սողոմոնի տաճարին վրայ Մուհամմէտի դրօշակը բարձրացաւ:

Քրիստոնեայ Եւրոպան նորէն ցնցուեցաւ ու զրկեց Գ. Խաչակիրութիւնը, որուն այս անգամ կը մասնակցէին վեհապետներ, Գերմանիոյ Փրէտէրիկոս Ա. Շիկամօրուս կայսրը, Գաղղիոյ Փիլիպոս Օգոստոս Թագաւորը եւ Անդղիոյ Րիչրդտ Աւիւծասիրտ Թագաւորը: Երբ խաչա-

կիրներն ու Գերմանիոյ Կայսրը Կիլիկիա հասան Լեւոն անոնց տուաւ ամէն տեսակ օժանդակութիւն: Կայսրը անոր խոստացաւ Թազաւորական Թազ, սակայն անիկա չի կրցաւ իրականացնել իր խոստումը, որովհետեւ Կալիկադոս դետին մէջ լոգանք առած միջոցին ուղեղատապէ վարակուած մեռաւ դետին սառուցեալ ալիքներուն մէջ:

Լեւոն փափաքեցաւ իր Թազը քահանայապետէն ստանալ: Հետեւաբար 1199 Յունուար 6-ի Մննդեան օրը, Տարսղնի Ս. Սոփիա եկեղեցիին մէջ Պապին ու Կայսեր նուիրակը արքունական Թազը նուիրեց, իսկ Հայոց Գրիգոր Ապիրատ Կաթողիկոս զայն Թազաւոր օծեց: Անոր տիտղոսն էր «Լեւոն Ա. շնորհիւ Հռովմէական Կայսեր, Բագաւոր Հայաստանի» Սակայն զահակալութենէն քիչ յետոյ խորթ հնչեց այս տիտղոսը իրեն, հետեւաբար փոխեց սա ձեւով, «Լեւոն Ա. Թազաւոր Հայոց, շնորհօքն Աստուծոյ»:

Անոր առաջին գործը եղաւ Մայրաքաղաքը Տարսղնէն Սիս փոխադրել, Թազաւորական կարգեր հաստատել, երկիրը բարեկարգել, նոր դրամ կտրել՝ վրան տրպելով իր պատկերը եւ անունը՝ «Լեւոն Թազաւոր Հայոց»: Անիկա նաեւ վարեց շատ մը պատերազմներ արտաքին թշնամիներու դէմ, յաղթեց Իկոնիոյ եւ Բերիոյ Սուլթաններուն, Անտիոքի Թազաւոր Պեմունդ Դ.ի եւ անոր կուսակից Տաճարական Ասպետներու դէմ հսկայ հակառակութիւններ ստեղծեց ու գրաւեց Անտիոքը: Անոր օրով իր տէրութեան սահմանները չափազանց ընդարձակեցան, Թազաւորութեան հեղինակութիւնը մեծցաւ, եւրոպական կայսրերու եւ Հռովմի Պապին հետ բեկամական զօրեղ յարաբերութիւններ ստեղծուեցան եւ հայ արքունիքը ամուսնական կապերով միացաւ Եւրոպական արքունիքներու հետ:

Լեւոն եղաւ նաեւ բարեկարգիչ, մարդասէր, կրթա-

սէր, օրէնսդէտ եւ ելեւմտադէտ: Անիկա նոր ճամբաներ բացաւ, շէնքեր, եկեղեցիներ, վանքեր, հիւանդանոցներ, անկեղանոցներ շինեց, կարեւոր կեդրոններու մէջ վարժարաններ հաստատեց եւ աղբը տնտեսապէս ու վրտաւորապէս դրաւ նախանձելի բարձրութեան մը վրայ: Վաճառականութիւնն ալ զարգացաւ անոր օրով եւ յարաբերութիւնները սերտացան Վենետիկի եւ Ճենովայի միջեւ: Գլխահարկի, տասանորդի, ժառանգութեան եւ դանազան ուրիշ տուրքեր ճշդուեցան եւ մաքսային դրութիւն մը ստեղծուեցաւ:

Երբ անիկա մեռաւ փառքով եւ յաղթանակներով լեցուն չըջանէ մը վերջ, «Ժողովուրդը լացաւ իր հօրը վրայ, եկեղեցին իր պաշտպանին վրայ, իսկ բանակը իր դիւցազնին վրայ»: Մարմինը թաղուեցաւ Սիսի մէջ, իսկ իր սիրտը տարին իր կառուցած Ակններ Վանքը:

ԶԱՊԷԼ ԹԱԳՈՒՀԻ ՈՒ ՖԻԼԻՊ. — (1219—1225). Լեւոն Ա. մանչ զաւակ չունենալով իր մահէն վերջ թագաւորական իրաւունքը անցաւ իր Զապէլ աղջկան, ծնած իր երկրորդ կնոջմէն, Սիպիլէ, Կիպրոսի թագաւոր Ամորի Լուսինեանի աղջիկէն: Անիկա Անտիոքի իշխանազուն Ֆիլիպի հետ ամուսնանալով միասին կառավարեց երկիրը լման երեք տարի (1222—1225): Ֆիլիպ ամուսնանալէն առաջ հանդիսաւոր խոստում տուած էր հաւատարիմ ըլլալ Հայոց եւ յարգել ու պահպանել անոնց աղդային ու կրօնական ծէսներն ու սովորութիւնները: Սակայն քիչ վերջ դրժեց իր խոստումը եւ երկիրը կողոպտել սկսաւ, նոյն իսկ Թագը Անտիոք փոխադրել տուաւ: Հայ իշխանները միացած ձերբակալեցին ու Սսոյ բերդին մէջ բանտարկեցին զայն, ուր թունաւորուելով մեռաւ:

Հայոց Պայլ՝ Կոստանդին Պապիւօնի, 1226-ին իր որդին Հեթում ամուսնացուց 16 տարեկան թագուհիին հետ եւ Հեթում փառաւոր հանդիսով թագաւոր օծուե-

ցաւ, իբր օգնական եւ դահակից Զապէլի: Պապիւօնի ընտանիքը թագաւորեց աւելի քան մէկ դար, 1226-1342

ՀԵԹՈՒՄ Ա.— (1226-1270). Հեթումի թագաւորութիւնն ամենէն երկարը եղաւ: «Մարմնով առոյգ եւ գեղեցկադէմ» այս թագաւորը, իր հօր Կոստանդին Պայլի իմաստուն դործակցութեամբ կառավարեց երկիրը: Անոր օրով սակայն Մոնկոլները Հայաստան արշաւեցին, դրաւեցին զայն ու մօտեցան Կիլիկիոյ դռներուն: Հեթում փոխանակ անոնց դէմ կռուելու, հեռատես քաղաքականութեամբ անոնց հետ հաշտութիւն կնքեց: Անոր այս քայլը դիւանագիտական նուրբ ձեռնարկ մ'էր, որուն նըպատակն էր անոնց օղնութեամբ իսլամներուն դիմադրել: Սակայն Մոնկոլները նոյնքան բարբարոս եւ անհաստատ էին: Հեթում կրկին եւ կրկին վերանորոգեց այս դաշինքը, եւ 1254-ին ինքն անձամբ Մանկու Խանին այցելութեան դնաց: Մոնկոլներու վախէն ոչ մէկ դրացի կը համարձակէր Կիլիկիոյ վրայ յարձակիլ: Սակայն երբ Մոնկոլներու զօրութիւնը տկարացաւ, Իկոնիոյ (Գոնիա) եւ Նգիստոսի Սուլթանները յարձակեցան Կիլիկիոյ վրայ, բազում բերդեր ու քաղաքներ գրաւեցին, Հեթումի մէկ զաւակը սպաննեցին, իսկ Լեւոն արքայորդին գերի բռնելով Նգիստոս տարին: Հոն երկու տարի բանտարկուելէ վերջ, ազատ արձակուեցաւ ու իր Հայրենիքը վերադարձաւ: Հեթում արքայական թագէն հրաժարելով, կրօնաւոր եղաւ եւ Մակար անուան տակ վանք քշուեցաւ:

ԼԵՒՈՆ Բ.— (1270-1289). Հեթումի տեղ թագաւոր կ'օծուի Լեւոն Բ. Պապիւօնի տան նշանաւոր արքաներէն մին: Անիկա ունէր թէ՛ զինուորական եւ թէ՛ մտաւորական փայլուն ձիրքեր: Գրականութեան սիրահար էր, հետեւաբար դպրութեանց Մեկենաս հանդիսացաւ: Բազմաթիւ բարեգործական շէնքեր շինեց ու հաստատեց բարձր

վարժարաններ, որոնց մէջ նշանաւոր էր Մեծ ֆար կոչուած աստուածարանական բարձր վարժարանը: Հայկական հին դրականութեան թանկագին մնացորդները կը պարտինք այս թագաւորին: Անոր օրով Նգիպտոսի Բիրարս Սուլթանը երկու անգամ Կիլիկիա արշաւեց: Առաջին անգամ Լեւոն լեւները խոյս տուաւ, բայց յետոյ տեսնելով թէ փախուստ տալով թշնամին կը խրախուսուի, անոնց դէմ ելաւ ու զանոնք պարտութեան մատնեց: Բիրարս հայ աղեղնաւորէ մը խոցուելով Դամասկոս փախաւ, ուր մեռաւ իր ստացած վէրքէն: Սակայն այս յաղթութիւնը Հայոց ալ սուղի նստաւ, որովհետեւ կորսնցուցին 300 ասպետներ եւ Մմրատ սպարապետը: Ապագա Խանը ի դնահատութիւն Լեւոնի քաջութեան փառաւոր սուր մը զրկեց անոր իբր նուէր: Նաեւ խոստացաւ Միջագետքի մէջ գրաւած հողերը Կիլիկիոյ կցել, բայց Լեւոն մերժեց վստահ ըլլալով թէ ատանկով իր թշնամիները պիտի չատցնէր եւ իր թագաւորութեան կեանքը կարճցնէ: 1278 թուականին Լեւոն ստիպուեցաւ քալել Գոնիայի Սուլթանին դէմ ու զայն հաշտութեան պարտադրել: Հաղիւ երկիրը խաղաղած կրկին պատերազմ ծագեցաւ Հայոց դաշնակից Թաթարներու եւ Մամլուքներու միջեւ: Լեւոն օգնութեան փութաց իր դաշնակիցներուն, սակայն Թաթար Մանգուքիմուր զօրավարին բանակները դասալիք եղան եւ Լեւոն 1282-ին ծանր կորուստներով Կիլիկիա վերադարձաւ: Լեւոն Բ. տեսաւ թէ Թաթարներու հետ իր բարեկամութիւնը սկսած է լուրջ վտանգ մը դառնալ Կիլիկիոյ անկախութեան, որովհետեւ Մամլուքներու թշնամութիւնը կը գրգռէր եւ թէ Թաթարները սկսէր էին համակրութեամբ նայիլ իսլամական կրօնքին, որ գոհացում կուտար իրենց բռնադղներուն եւ պատերազմական ախորժակին: Հետեւաբար 1285-ին հաշտութեան դաշինք կնքեց Նգիպտոսի Սուլթան Մէլիք-Մանսուրի հետ տասը տարուան հա-

մար: Խաղաղութեան նստատակաւ կնքուած այս դաշինքը թէեւ շատ ծանր պայմաններ կը պարունակէր, սակայն բռնադատեալ ստորագրեց զայն: Քանի մը տարի հանդարտ ապրեցաւ Լեւոն իր Հայրենիքին բարոյական ու նիւթական բարուոքման մասին աշխատելով եւ երբ մեռաւ ազգը մեծապէս սգաց անոր կորուստը:

Հետօժիւր Բ.— (1289—1305). Լեւոնի յաջորդեց իր որդին Հեթում Բ. բարի, վեհանձն, կշռադատ միտք մը, ու միանգամայն քաջ զինուոր մը, որ Եւրոպացիներու կողմէն արեւելքի քրիստոնէից ՎԱՀԱՆԸ կը ճանչցուէր: Սակայն իր թոյլ ու անհաստատ կամքին պատճառաւ շատ ձախող չրջան մը ունեցաւ:

Անկէկա 16 տարուան մէջ երեք անգամ դահէն հրաժարեցաւ ու հեռացաւ կրօնաւորի պաշտօն ստանձնելու համար եւ երեք անգամ ալ երկիրը տակն ու վրայ ընելով կրկին դահ բարձրացաւ: 1293—ին իրեն յաջորդեց իր եղբայրը՝ Թորոս: Իսկ Սմբատ եղբայրը Թորոսը մեռցնել տալով, եւ Հեթում բանտարկելով դահը գրաւեց (1296—1298): Այս անգամ փոքր եղբայրնին Կոստանդին Սմբատը բանտ դրաւ, Հեթում ազատ արձակեց ու ինք դահ բարձրացաւ (1298—1299): Հեթում որ բանտարկութեան ընթացքին աչքին լոյսը կորսնցուցած էր, վերստացաւ իր տեսողութիւնը եւ Տաճարական եւ Հիւրընկալ ասպետներու օգնութեամբ կրկին դահ բարձրացաւ:

Հեթումի թագաւորութեան շրջանին (1292) Մելիք Աշրաֆ Կիլիկիա արշաւեց եւ Հռոմկալա գրաւեց: Ստեփանոս կաթողիկոսն ալ Սր. Լուսաւորիչի աջին հետ Դամասկոս տարաւ: Կաթողիկոսը յետոյ գերութենէն ազատեցաւ, բայց օտարութեան մէջ մեռաւ, իսկ Սուրբ աջը Աշրաֆի յաջորդին օրով միայն ետ բերուեցաւ (1294): Անոր օրովն էր կրկին որ Դամասկոսի Սուլթան Սուսամիչ, Եգիպտական զինուորներու օգնութեամբ սկսաւ



Կիլիկիոյ վրայ քալել: Հեթում յարձակեցաւ, մեծ ջարդ տուաւ եւ Սուլթանը բռնելով Թաթարներու Ղազան Խանին զրկեց, որ գլխատել տուաւ: Սակայն 1302-ին Ղազան Խանը մեռաւ եւ անոր յաջորդ Ղարաղան Մահմետականութիւնը ընդունեց ու թշնամացաւ Հայերուն: Անոր բանակները Կիլիկիան լաւ ճանչնալով արշաւեցին ու մեծ աւերներ գործեցին, մինչեւ որ Հեթում իր Թմբիւրէն արթըննալով լաւ ջարդ մը տուաւ թշնամիին, որ հարուստ աւարներով ետ կը վերադառնար:

Քաղաքական աննպաստ պայմաններու տակ ընկճուած Հեթում Բ. արքայական պաշտօնի բեռը կրկին ծանր զգալով, Սիսի մէջ Թաղաւոր օծել տուաւ իր Թոռը Լեւոն Գ. վերջնականապէս հրաժարելով գահէն, իրեն վերապահելով Խնամակալ – քաղաւորաւայրի պաշտօնն ու տիրոջօրը:

ԼԵՒՈՆ Գ.— (1305–1308). Տասնեւից տարեկան նորապսակ Թաղաւորը միջոց չունեցաւ իր տաղանդը յայտնաբերելու: Բերիոյ կուսակալը իր զօրավարը Քուշթիմուր Կիլիկիոյ վրայ զրկեց: Հեթում Բ. որ կրկին սքեմի տակ մտած էր, պատերազմի դաշտ իջաւ ու նոր Թաղաւորին հետ սոսկալի ջարդ մը տուաւ թշնամիին, որ հսկայ կորուստով փախուստ տուաւ: Այս միջոցին երեւան եկաւ կրօնական վէճ մը, որ ներքին երկպառակութեան պատճառ դարձաւ: Հայ առաջնորդներէն շատեր այն համոզման եկած էին թէ հայերու ամենաբանաւոր քաղաքականութիւնը պիտի ըլլայ միանալ Հռովմէական եկեղեցիին, անկէ գտնելու համար քաղաքական պաշտպանութիւն: 1307-ին Սիսի մէջ գումարուեցաւ կրօնաժողով մը, աւելի քան 40 եպիսկոպոսներու ներկայութեան, եւ շատ մը եկեղեցականներու եւ իշխաններու մասնակցութեամբ: Հոն ընդունուեցաւ ու վաւերացուեցաւ Գրիգոր Է. Անուարդեցի Կաթողիկոսին ծրագիրը:

Սակայն անմիջապէս յետոյ սոսկալի ողբերգութիւն մը ամէն ինչ տալին ու վրայ ըրաւ: Այդ ծրագրէն դժգոհ մընացած Ժողովուրդը՝ զայրացած, Թաղաւորն ու իշխանները մատնեց Թաթարաց Պիլարդու իշխանին, որ մասնաւոր վրէժ ունէր Հայոց դէմ Սիսի մէջ մզկիթի մը կառուցումը արգելուելուն համար: Պիլարդու Լեւոնը եւ Հեթումը, արքունի 40 իշխաններով իր քով իբր հիւր հըրաւիրելով զանոնք բոլորն ալ սրէ անցնել տուաւ: Հեթումի մէկ ուրիշ եղբայրը Օշին, մնացած Հայ իշխաններու գլուխն անցած Անապարդայի վրայ քալեց ու Մոնկոլները երկրէն դուրս արտաքսեց:

ՕՇԻՆ. — (1308-1320). Այս յաղթանակէն անմիջապէս վերջ Տարսոնի Մայր Տաճարին մէջ ինքզինքը Թաղաւոր օծել տուաւ: Անոր գլխաւոր գործը եղաւ բազմաթիւ բերդերու եւ եկեղեցիներու շինութիւնը: Տարսոնի շուրջ հաստատահիմ պարիսպ մը կերտեց եւ նոյն քաղաքին մէջ կառուց փառաւոր եկեղեցի մը, որ յետոյ մըզկիթի փոխուեցաւ, ու մինչեւ այսօր եկեղեցի-մզկիթ կոչուի: Օշինի օրով Հայոց եւ Թաթարներու միջեւ գոյութիւն ունեցող բարեկամութիւնը վերջացաւ եւ ամբողջ Հայաստան ու Կիլիկիա մատնուեցան մահմետական հորդաններու սուրերուն եւ մշտնջենական հալածանքներուն: Նոյն ատեն Օշին իր նախորդներու սխալէն չի խրատուելով կրկին վերարծարծեց կրօնական հարցերը: Հետեւաբար 1316-ին Ատանայի մէջ Ժողով մը գումարեց գլուխ հանելու համար Սիսի Ժողովին որոշումները: Ժողովըդական դիմադրութեան հանդիպելէ վերջ հրաժարեցաւ իր միտումներէն: Երկու անգամ ղեսպանութիւն ղրկեց Հոովմի Յովհաննէս ԻԲ. Պապին եւ Ֆրանսայի Թաղաւորին, որպէս զի նոր խաչակրութիւն մը ղրկեն իրեն օգնելու համար: Անոնց անտարբերութենէն յուսահատ մեռաւ անիկա 1320-ին:

ԼԵՒՈՆ Դ. — (1320-1342). Օշինի որդին Լեւոն տա-

սը տարեկան էր, երբ Մխիթ մէջ մեծ շուքով թաղաւոր
օծուեցաւ, Կոռիկոսի Օշին Պայլի խնամակալութեան
ներքեւ: Ինը տարի վերջ անիկա կառավարութեան ղեկը
իր ձեռքն առաւ: Անոր վեհապետութիւնը դժբաղդու-
թիւն մը եղաւ: Անիկա իր անդթութեամբ, իր ոճիրնե-
րով, իր անհեռատեսութեամբ ատելի դարձաւ Հայ Ժո-
ղովուրդին: 1321-ին Նասր Սուլթանը Կիլիկիա արշաւեց
ու այնքան չարիք հասցուց, որ կ'ըսուի թէ ասիկա Հա-
յոց կրած ամենէն սոսկայի անդթութիւնն էր: Լեւոն այս
սպանդները Հռովմի Պապին իմացուց, անկէ օգնութիւն
խնդրելով: Անանկ կ'երեւի թէ Պապը միայն մի քիչ դը-
րամական օգնութիւն կրցաւ ընել: Այս յարաբերութիւն-
ները սակայն պատճառ դարձան, որ ուրիշ խաչակրու-
թեան մը սխալ տարածայնութիւնը ծաւալ դտնէ: Եգիպ-
տոսի եւ Հալէպի Սուլթանները Հայերը պատճառ նկա-
տելով որոշեցին ոչնչացնել զանոնք, եւ սկսան իրարու
ետեւէ արշաւել Կիլիկիա: 1337-ին Լեւոն հաշտութիւն ու-
ղեց Եգիպտացիներէն, որ հաւանեցան հաշտուիլ, պայ-
մանաւ որ «Հայերը այլեւս Եւրոպայի հետ չհաղորդակ-
ցին»: Լեւոն, ճարահատ, խոստացաւ Աւետարանին վը-
րայ երդում ընելով: Սակայն երկու տարի չտեւեց ու
անիկա կրկին նոյն սխալին մէջ ինկաւ: Նասր լսելով թէ
անիկա կրկին սկսած է Պապին հետ յարաբերիլ 16000 հե-
ծեկազօր զրկեց Կիլիկիան աւերելու եւ վերջ տալու Ասիոյ
միակ քրիստոնեայ իշխանութեան:

Հայերն ալ երկու կուսակցութեան բաժնուեցան,
մին թաղաւորին կողմնակից՝ Եւրոպական օժանդակու-
թեան կը հաւատար, իսկ միւսը Կաթողիկոսին կողմնա-
կից կուղէին հեռու մնալ Եւրոպայէն: Կաթողիկոսը
նոյն իսկ սպառնաց թաղաւորը բանադրել: Բայց Լեւոն
պաշտօնանկ ըրաւ Կաթողիկոսը: Ազգայնական Կուսակ-
ցութեան դաւադրութեամբ Լեւոն Դ. զոհ դնաց մար-
դասպաններու ղանակին: Ռուբինեան Հայկական սե-

րունդէ թաղաւորութիւնը վերջացաւ, որովհետեւ Լեւոն ժառանգ չթողուց, այլ կտակով Կիլիկիոյ դաճուն ժառանգ նշանակեց իր հօրաքրորդէին Գուխտոն Լուսինեան:

Դ. ՎԵՐՋԻՆ, ՕՏԱՐ ԵՒ ԿԻՊՐԱՑԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒ
ՇՐՋԱՆ

Կիլիկիոյ թաղը Պիպիւօնի Հայ տունէն Գաղղիական տան մը՝ Լուսինեանց անցնելով, Ռուբինեան Հարստութիւնը թեւակոխեց իր Զորրորդ եւ վերջին չրջանին, որ տեւեց միայն 33 տարի, (1342-1375): Լուսինեան տոհմը խաչակիրներու հետ Եւրոպայէն եկող ազնուական գերդաստան մըն է, որ հիմա մարած է եւ իր անունը առած է Գաղղիոյ Բուադէի Գաւառին Լուսինեան գղեակէն: Այս գերդաստանը թէ՛ Երուսաղէմի եւ թէ՛ Կիպրոսի գահերուն թագաւորներ տուաւ:

Երուսաղէմի Գուխտոն թագաւորը 1187-ին Սալահէտին Սուլթանի ձեռքը գերի ինկաւ եւ Երուսաղէմի քրիստոնեայ թագաւորութիւնը ջնջուեցաւ: Գուխտոն աղաւտ արձակուեցաւ պայմանաւ որ այլեւս մահմետականներու դէմ չէնք չբարձրացնէ: 1192-ին Կիպրոս երթալով հոն Լուսինեան թագաւորութիւնը հաստատեց:

ԳՈՒԽՏՈՆ. — (1342-1344). Գուխտոն Լուսինեան յաջորդեց Լեւոն Դ-ի: Անիկա Կիպրոսի Հէնրի Բ. թագաւորին եղբորորդին էր, մօր կողմէն հայ, Լեւոն Բ. թագաւորին թոռը: Գուխտոն Հայոց թագաւոր պսակուեցաւ «Կոստանդին Բ.» անունով: «Ան բարի, ուշիմ, քաջամարտիկ, աննկուն եւ ձեռներեց մէկն էր»: Անոր չըրջանը թէեւ կարճ եւ տաղնապալից եղաւ, բայց Մամլուք հրոսները չկրցին թիգ մը հող դրաւել:

Սակայն Գուխտոն իր չափազանց լատինասիրութեամբ վիրաւորեց հայերը: Փր հետ բերաւ մեծ թիւով Փրանկ ասպետներ եւ երկրին գլխաւոր պաշտօնները անոնց յանձնեց:

Հայերէն լեզուն վտարեց արքունիքէն եւ լատինարէն լեզուն դարձուց երկրին պաշտօնական լեզուն: Շարունակելով իր նախորդներուն, սխալը շարունակական դիմումներ կատարեց Եւրոպայի արքունիքներուն եւ Պապին նոր խաչակրութիւն մը ստեղծելու մտօք: Հայոց աղգայնական կուսակցութիւնը ատելութեամբ եւ արհամարհանքով լեցուեցաւ անոր դէմ եւ օր մը Ատանայի մէջ սպաննեցին զայն, իր եղբայր Պեմունդի եւ 300 Փրանկ թիկնապահներու հետ միասին:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ.— (1344—1363). Գոլիտոն արու դաւակ չունէր եւ Աղգայնական Կուսակցութիւնն ալ հակառակ էր Լուսինեան գերդաստանին անոնց լատինասիրութեան եւ կաթոլիկութեան համար: Հետեւաբար Կիլիկիոյ Թագաւոր ընտրեցին Նղրեան Պաղտին մարաջախտի անդրանիկ որդին Կոստանդին, որ բնիկ հայ էր, խնամութեամբ կապուած արքայական ցեղին: Անիկա անջիղ, անկարագիր, անգութ ու անձնասէր մէկն էր, սակայն աւելի դիւանագէտ ըլլալով կրցաւ կիրքերը հանդարտեցնել եւ Հայոց սէրը շահիլ: Անոր ամենամօթալի գործը եղաւ Գոլիտոնի բոլոր աղգականները բանտարկել, անոնց կալուածները գրաւել եւ նոյն իսկ զանոնք թունաւորելու անյաջող փորձեր կատարել: Անոր դահակալութեան օրով Հայկական անկախութիւնը սկսաւ երթալով տագնապալից դառնալ եւ ամբողջ Կիլիկիա ներքին ու արտաքին թշնամիներու երեսէն ծանր դժբաղդութեանց ենթարկուեցաւ: Թուրքմէները երկրին ներսերը գրաւած էին, ծովեղերքի Հայկական ամրութիւնները Եգիպտացոց ձեռքն էր, բացի Կոռիկոսէն: 1359—ին Եգիպտոսի Սուլթան Նասր Հասան գրաւեց Սիսը: Յուսահատութիւնը կատարեալ էր: Ռուբինեան Հարստութիւնը մահամերձ վիճակի մէջ կը գտնուէր: Լուսինեաններ կրկին Հայոց օգնութեան հասան: Կիպրոսի Թագաւոր Պետրոս Ա. նաւատորմիղ մը ղրկեց 1361—ին, որ Կոռիկոսը գրա-

ւելով ժողովուրդն ազատեց : 1363-ին Կոստանդին Գ. մեռաւ առանց ժառանգի :

Կոստանդինի մահէն վերջ լման երկու տարի արքայական դահլը թափուր մնաց լատինասէր Լուսինեան Կուսակցութեան եւ Ազգայնական Կուսակցութեան միջեւ մղուած պայքարին հետեւանքով : Սակայն 1365-ին Ազգայնական Կուսակցութեան յաղթանակով դահ բարձրացաւ Նղրեանց ցեղէն, Հեթում իշխանի որդին ու կոչուեցաւ Կոստանդին Դ. :

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. — (1365—1373) : Անոր չրջանը այնքան տխուր եղաւ շնորհիւ իր անհոգ, անտարբեր եւ բռնակալ նկարագրին որ ղինքը դահ բարձրացնող Կուսակցութիւնն անգամ զըջաց իր սխալին համար : 1373-ի նակալ նկարագրին որ ղինքը դահ բարձրացնող Կուսակցութեան դաւաճանական նպատակով ամբաստանուեցաւ եւ պալատական յեղափոխութեան մը միջոցին շատ անձեր հետամուտ եղան երկրին թաղը ձեռք ձգելու : Ազգայնական Կուսակցութիւնը կը փափաքէր որ ուրիշ Եւրոպացի իշխան մը դահին տիրանայ ամուսնանալով նախկին թագուհի Մարիամի հետ եւ Օթոմ Պրունզլիք հանդիսաւորապէս սլսակուեցաւ թագաւոր Հայոց, բայց ամուսնութիւնը չիրականանալով չեղեալ նկատուեցաւ : Ուրիշներ կ'աշխատէին Կիպրոսի Պետրոս Ա. թագաւորին տալ Հայկական թաղը, ի վարձատրութիւն իր օգնութեան : Իսկ Լատինասէր Կուսակցութիւնը կրկին Լուսինեան տոհմէն մէկը կ'ուզէր : Վերջապէս երկու կուսակցութիւնները համաձայնելով Լեւոն Լուսինեան իշխանը ընտրեցին Հայոց թագաւոր :

ԼԵՒՈՆ Ե. — (1374—1375) . Մեծ փառքով ու աննման ողբերգութեամբ թագաւոր սլսակուեցաւ անիկա Միսի Ս. Սոփիա տաճարին մէջ նախ լատինական ծէսով եւ միւսումով, յետոյ Պօղոս Ա. Կաթողիկոսէն՝ Հայկական ծէ-

սով եւ միւռոնով: Այս կրկնակ օծումը Հայոց խիստ ծանրը եկաւ ու երկու հակամարտ կուսակցութեանց մէջ խրամատը աւելի լայնցուց:

Լեւոն բնաւորութեամբ ազնիւ, քաջ, հաստատակամ, քաղցր, ողորմած ու բարեպաշտ մէկն էր: Իր յարաբերութեանց ու նիստ ու կացին մէջ եւս շատ պարզ էր:

Անիկա հասուն ծրագիրներ ունէր Կիլիկիոյ վերականգման համար, սակայն երկիրը արդէն կործանած ու ժողովուրդը զոռած ու սպառած էր: Բանակը խիստ խեղճ էր ու արքունի գանձը դատարկ: Արդէն 1369-էն ի վեր, երբ հայրենասէր եւ կտրիճ ասպետ Լիսյարիտ ինկաւ կռիւին մէջ, Եգիպտոսի Մէմլուքներն ու Թուրք-մէն զինուորներ Կիլիկիոյ մեծ մասը գրաւած ու հասած էին Սիսի արուարձանները: Լեւոն կը ջանար դժբաղդ կացութեան դարման մը գտնել, բայց ի՛շտ:

Ազգայնական Կուսակցութիւնը երբէք չմոռցաւ կրկնակ օծումը: Հակառակութիւնը շատցաւ լատին թագաւորին դէմ: Դաւեր ու ըմբոստութիւններ իրարու յաջորդեցին: Հայ դաւաճանները շուտով լուծեցին իրենց վրէժը: Եգիպտոսի բանակները եկան պաշարեցին Սիս մայրաքաղաքը Ըշրկ-Թիմուրի հրամանատարութեան տակ: Ազգայնական Կուսակցութեան թուլամորթ իշխաններու դաւաճանութեամբ Սիս ինկաւ եւ Լեւոն յուսահատ անձնատուր եղաւ, վերջ տալով նաեւ Ռուբինեան Հարստութեան: Լեւոն իր արքունիքին ու Պօղոս Կաթողիկոսին հետ Եգիպտոս տարուեցաւ, ուր մնաց մինչեւ 1379, երբ իր աքսորականի կեանքէն ազատ արձակուեցաւ ու Եւրոպա գնաց:

Եւրոպայի մէջ անիկա արժանացաւ շատ մը պատիւներու: Անիկա նկատուած էր «Իբր անգուգալան քաջ ասպետ մը, իբր անվեհեր պաշտպան քրիստոնեաներու եւ անոնց դատին գոհը»: Թագաւորներ եւ իշխաններ մեծ

պատիւով ողջունեցին զայն եւ Կղեմէս է. իրեն շնորհեց
«Ոսկեղէն վարդ» արքունի պատուանշանը :

Բաղում անյաջող փորձեր ըրաւ իր գահը ձեռք ձը-
գելու համար եւ յուսահատ մեռաւ Փարիզի մէջ 1393-ին :
Անոր գերեզմանը այժմ կը դտնուի Փարիզի մօտ , Սէն
— Տընի քաղաքին արքայարանին մէջ :

Պատմութիւնը ինքզինքը կրկնեց Ռուբինեան Հարըս-
տութեան դաւաճանական ոչնչացմամբ : Կարծես թէ ա-
նէժք մը կայ Հայ անունին վրայ , միշտ հայ ձեռքերով
քանդել Հայուն տունը : Դարեր առաջ պարսկասէր Կու-
սակցութիւնը ի հեճուկս յունասէր Կուսակցութեան տա-
պալել տուաւ Արշակունեաց գահը , յետոյ դարեր վերջ
յունասէր Կուսակցութիւնը , հակառակելով ազգային
Կուսակցութեան Անիի կործանումը փութացուց , ի շահ
Բիւզանդիոնի : Իսկ 1375-ին ազգային Կուսակցութիւնը ,
ծնած քաղաքական ու կրօնական բաժանումներէ , Ռու-
բինեանց գահը մատնեց Եգիպտոսի Սուլթաններու ձեռ-
քը :

Ռուբինեան Հարստութիւնը մեր պատմութեան մէջ
անջատ ու առանձին տեղ մը բռնելու իրաւունքն ունի : Ա-
նիկա ոչ թէ միայն 300 հարիւր տարիներ խիստ ահաւոր
դոհողութիւններով շարունակութիւն տուաւ Հայոց քա-
ղաքական կեանքին , այլ նաեւ Հայը յարաբերութեան մէջ
դրաւ եւրոպական ազգերուն հետ : Այս յարաբերութիւնը
թէեւ ունեցաւ իր քաղաքակրթիչ ազդեցութիւնը , սակայն
նաեւ եղաւ իր անկման պատճառը , որովհետեւ գրգռեց
մահմետական ժողովուրդներու նախանձն ու կասկածը :
Ասոր հետեւանքով Ռուբինեանց ժամանակ Հայ ժողո-
վուրդը ապրեցաւ խաչակրութեանց մեծագոյնը , մղուած
իր գաղափարական անկախութեան եւ կրօնական ազա-
տութեան ի նպաստ :

THE ARMENIAN KINGDOM OF CILICIA.

The eleventh century of our era has recorded two events of very great importance to the Armenian people, happening within a period of thirty-five years. These were the destruction of an old kingdom in Armenia, and the establishment of a new Armenian kingdom outside of Armenia. For in 1045 A. D. king Gagik II was forced to resign his throne and give his kingdom over to the Byzantine emperor, and in 1080 a close relative of Gagik, a Prince Ruben founded a new state in Cilicia, also called Sisvan by the Armenians.

The absorption of Armenia by the Byzantines and the ever increasing invasion of our country by the Turks coming from the east, forced many Armenians to leave their country and seek refuge on Byzantine soil. By the middle of that eventful century a prosperous Armenian colony was already established in Cilicia, which was greatly augmented by a new stream of refugees who poured continuously westward.

Prince Ruben found the Armenians already numerically superior to the Greeks and at once began to create a new state. He drove the Greeks away and declared his independence of Byzantium. With the help of other Armenian princes he succeeded in occupying a large part of Cilicia and ruling over it as a petty king, thus founding a new dynasty named Rubinian after him.

This Armenian kingdom on the shores of the eastern Meidterranean lasted for nearly 300 years, and brought the Armenians in close contact with Europe. For it was during this period that the great Crusades of the Middle Ages were undertaken for the purpose of rescuing the Holy Places from Moham-medan domination. The Crusaders found a ready ally and a sincere friend in this Armenian kingdom, whose services to the Christian cause were extolled several centuries later by Pope Gregory XIII. Aside from that belated praise the Armenians received no benefit from their co-religionists of the West, but on the other hand their friendliness toward the Crusaders aroused the hostility of their asiatic neighbors and eventually brought about their own downfall, forgotten and deserted by their European allies.

The Cilician kingdom can be roughly divided into three periods

I. The Period of Conquest and Settlement 1080-1119.

II. The Period of Sovereign Kings - 1119-1342.

III. The Period of Foreign Kings - 1342-1375.

I. The State created by Ruben was in reality a semi - independent principality, nominally under Byzantine suzerainty. The successors of Ruben carried on his work and enlarged the state at the expense of neighboring princes.

Eight princes, reigned during this period, each in his turn enlarging the territory, and developing the military, political and economic structure of the country. All these rulers belonged to the Rubinian family, direct descendants of the founder of the dynasty.

They were Constantine, Toros I, Levon I, Toros II, Mleh, Ruben II, and Levon II.

II. The last named ruler, Levon II was destined to be the first crowned sovereign of this new Armenian state. He became not only the greatest king of the Rubinian dynasty, but one of the few and really magnificent figures among the Armenian rulers of all time. Levon II succeeded his brother Rubin as the ruling prince of Sisvan in 1185. Being a shrewd diplomat as well as a brave soldier and a very able administrator he succeeded in winning the friendship of the three European kings who had come East on the Third Crusade. These were Frederick Barbarossa of Germany, Philippe Auguste of France and Richard the Lion-hearted of Britain. Frederick as the head of the Holy Roman Empire was the most influential of the three and Levon gave every aid and comfort to the German army, and won the promise of the Emperor to receive the title of king. The German Emperor however, died while swimming in the Cilician river Calycadnus, but Levon reminded his son and successor Henry VI of his father's promise, and also sent a legacy to the Pope of Rome asking his Holiness to send him a crown. Both the Pope and the Emperor received the Armenian delegation with great honors. Pope Celestinus sent a golden crown to Levon by a special emissary and the brave prince was crowned king as "Levon I, King of Armenia, by the grace of the Roman Emperor". A few years later however he changed his title to "Levon I, by the Grace of God, the king of the Armenians."

Levon I enlarged his kingdom, fought many successful wars, reorganized the army, brought re-

forms into the government, built highways, churches, hospitals and schools, transferred the capital from Tarsus to Sis, and established friendly relations with European royalty.

As Levon had no male descendant he was succeeded to the throne by his daughter Zabel, born by a second marriage with Sybil Lusignan the daughter of the king of Cyprus. The young queen married the son of the king of Antioch, whose treasonable activities were soon discovered and he was imprisoned. He was poisoned in prison and the widowed queen was married to a young Armenian noble, Hetum Babironi, who thus became king and co-ruler with queen Zabel.

The zenith of the Cilician kingdom had been reached during the reign of Levon I. After him it was a period of decline, slow at first, but soon taking alarming proportions, with the people divided into two factions, each headed by the king and the Catholicos respectively. The policy of the royalists was closer ties with Europe, adoption of Catholicism, and Europeanization in general. While the nationalist faction led by the Catholicos, advocated a wary policy toward Europeans and the intensifying of the national spirit by adhering to the national church.

The controversy between the two factions grew into such proportions that Levon IV, the last Rubinian king was murdered and the Cilician crown passed to the French Lusignan family in 1342.

III. The third period of this Armenian kingdom in Cilicia lasted only thirty-three years. The famous Lusignan family which had reigned in Cyprus gave the Armenians four kings, at a time when the Cilician state was in a disintegrating condition, both by inter-

ՀԵՐԱ

II
2703

nal discord and external the Arabs. These last Fre were Constantine II, Con and Levon V. They were however half-armenian, as Constantine the Second's mother was the daughter of King Oshin, the last Rubinian monarch except one.

But the Armenians, especially the nationalist faction had no affection for the foreign kings, and through their machinations the country was invaded by Mameluke Arabs of Egypt who took Levon V as captive and reduced Cilicia into an Egyptian province, putting an end to Armenian independence.

